



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«20» 11 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 95

Ձեռնարկողը՝

<<ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոյուզնս>> ՍՊԸ

Ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

Գործունեությունը՝

**Սևան քաղաքի, թերակղզու ոչ ափամերձ հատվածում
Արտաշ Գրիգորյանին պատկանող տարածքի 0.2244
Էլեկտրամատակարարման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվեկշիռություն**

Գեղարքունիքի մարզ

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ՝**



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 95
<20> 11 2018թ.

ք. Սևան, թերակղզու ոչ ափամերձ հատվածում Արտաշ Գրիգորյանին պատկանող տարածքի 0.22 կՎ էլեկտրամատակարարման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝ <<ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս>> ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/ /Բ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Սևան քաղաք

Համաձայն նախագծի նախատեսվում է ապահովել Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի բնակիչ Արտաշ Գրիգորյանին պատկանող տարածքի 0.22 կՎ էլեկտրամատակարարումը: Նախագծված օդային գծի անցկացման տարածքը գտնվում է Սևան համայնքի վարչական սահմաններում, "Սևան" ազգային պարկի տարածքում՝ թերակղզու ոչ ափամերձ հատվածում: Նախագծման համար հիմք է հանդիսացել "Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ-ի "Գեղամա" մասնաճյուղի կողմից տրված № 33499111 առ 22.02.2018թ. էլեկտրական ցանցին միացման տեխնիկական առաջադրանքը համաձայն որի, բաժանորդին պատկանող տարածքի էլեկտրամատակարարումը նախատեսվում է իրականացնել Սևանի ՏԵ 7380 ԼՏԵ-ից սնվող 0.4 կՎ օդային գծից, որի վերջին հենարանից կառուցվելու է 215 մ երկարությամբ, 0.4 կՎ մեկուսացված օդային գիծ: Նորակառույց 0.4 կՎ օդային գծի վերջին՝ № 9 հենարանից կառուցվելու է 41 մ երկարությամբ, 0.22 կՎ մեկուսացված օդային գիծ՝ մինչև սպառողի կանգնակը: ՕԳՄ-ից միացվող հնարավոր բեռը հաշվարկվել է 7 սպառիչների համար: Որպես զարգացող տարածք, № 9 հենարանից հետագայում կարող են սնուցվել ևս 6 այլ բաժանորդ: Գործունեության ենթակա տարածքում տեղադրված են ժամանակավոր կրպակ-տնակներ: Օդային գիծը վերգետնյա եղանակով անցնելու է հանգստյան գոտու տարածքով, հողային ճանապարհի երկայնքով:

Կառուցվող օդային գծի ընդհանուր երկարությունը կազմում է 256 մ, որից՝ 0.4 կՎ ՕԳ - 215 մ, 0.22 կՎ ՕԳ - 41 մ: Նախագծով նախատեսվում է տեղադրել երկաթբետոնե



հենարաններ (այդ թվում՝ 5 հատ Ս տիպի, 3 հատ K տիպի, 1 հատ ՄԱ տիպի): Օդային գծի հաղորդակարերի կտրվածքները 0.4 կՎ ՕԳՄ-ի համար ընտրվել են՝ $3 \times 50 + 1 \times 54.6$ մմ², իսկ 0.2 կՎ ՕԳՄ-ի համար՝ 2×25 մմ²:

Նախատեսվող գործունեության համար դիտարկվել են այլընտրանքային տարբերակներ, ընտրված տարբերակը բնապահպանական և ֆինանսատնտեսական տեսանկյունից եղել է նպատակահարմարը:

Էլեկտրամատակարարման գծի կառուցման աշխատանքները կատարվելու են մեկ փուլով, 9 աշխատանքային օր ընդհանուր տևողությամբ: ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսվող շինարարական աշխատանքների տեսակների և այլ ցուցանիշների (այդ թվում՝ կիրառվող տեխնիկական միջոցներ և նյութեր, աշխատուժ, աշխատանքների իրականացման ժամանակացույց, օգտագործվող բնառեսուրսներ և այլն) վերլուծության արդյունքում գնահատվել է շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա կանխատեսվող ազդեցությունները և վերջիններիս համար առաջարկվել են բնապահպանական միջոցառումներ:

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է կիրառել հետևյալ տեխնիկական միջոցները՝ ավտոկոունկ, ավտոամբարձիչ, բեռնատար մեքենաներ, ինչպես նաև ձեռքի հորատման մեքենա:

Օդային գծի համար նախատեսված 9 հենարանների տեղադրման փուտերը փորվելու են ձեռքով՝ հորատման համար նախատեսված սարքի միջոցով: Հենարանների տեղադրման հողային աշխատանքներից կառաջանա 3.25 մ³ ծավալով հող, որից 0.278 մ³ ծավալը հողի բերրի շերտն է: Այն օգտագործվելու է տեղում՝ տարածքի հարթեցման և բարեկարգման համար:

Ընդհանուր առմամբ հողային աշխատանքների իրականացման ժամանակ՝ 9 հենարանների տեղադրման արդյունքում փորված գրունտի գումարային ծավալը կկազմի՝ 3.25 մ³, որից գրունտի վերին՝ բերրի շերտը կկազմի մոտ 0.278 մ³, որն ամբողջությամբ, հենարանների տեղադրման աշխատանքներին զուգահեռ, օգտագործվելու է տեղում՝ տարածքի բարեկարգման և վերականգնման համար: Այն 5 օր տևողությամբ կպահվի ջրադիմացկուն ՊՎԲ ծածկով՝ աշխատանքների ավարտից հետո փորվածքների շրջագծի հատվածներում կօգտագործվի ռեկուլտիվացիայի նպատակով: Գրունտի մնացորդային զանգվածը՝ 2.972 մ³ ծավալով, որպես լցանյութ տեղում կօգտագործվի հենարանների հիմքերի ամրացման, փորվածքների հարթեցման և բարեկարգման համար:

Գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են՝ շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումները (որոնք առաջանում են վառելիքի այրման արդյունքում) և անօրգանական փոշին, որն առաջանում է հողային աշխատանքներից: Հենարանների տեղադրման աշխատանքների ընթացքում մթնոլորտային արտանետումները շարժական, չկազմակերպված աղբյուրներից են: Շինարարության ընթացքում վնասակար նյութերի արտանետումների քանակները փոքր են (գումարային ծավալը շինարարության ընթացքում կկազմի 0.0739 տ կամ մոտ 74 կգ) և չեն կարող ազդել մոտակա բնակավայրերի մթնոլորտային օդի որակի վրա:



Կապալառու կազմակերպությունը Սևանի թերակղզու ոչ ափամերձ հատվածում, տարածքի հարևանությամբ վարձվելու է սեփական տուն, կամ շինություն, որը կծառայի կառուցման աշխատանքների ժամանակահատվածում որպես կազմակերպության գրասենյակ, ինչպես նաև աշխատանքներում ներգրավված անձանց սանիտարահիգիենիկ կարիքները (լոգարան, զուգարան և սննդի ընդունման սենյակ) հոգալու համար: Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը նախատեսված է օգտագործել ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար: Ջրօգտագործումը ընդհանուր՝ 2.015մ³/կառուցման ժամանակահատված, քանակով պահովվելու է Սևան քաղաքի ջրամատակարարման ցանցից:

Շինարարության համար օգտագործվող նյութերը մատակարարվելու են "ՀԷՏ" ՓԲԸ-ի Գեղամա մասնաճյուղի "Սևան" էլ. ցանցի պահեստից՝ անմիջապես օգտագործման համար: Շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների սպասարկումն իրականացվելու է մասնագիտացված կետերում: Շինհրապարակում փոշի առաջացնող շինարարական նյութերը ծածկվելու են ՊՎՔ թաղանթով՝ փոշեառաջացումը կանխելու նպատակով: Բոլոր տեսակի հեղուկ նյութերը պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերից խուսափելու համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա օդային գծի հենարանների կառուցման ընթացքում, դա 0.01 տ ընդհանուր քանակությամբ շինարարական աղբը և այլումինե հաղորդալարերի մնացորդներն են, որոնք աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվեն "ՀԷՏ" ՓԲԸ-ի "Սևան" մասնաճյուղի պահեստ, կամ կհանձնվեն տվյալ տեսակի թափոնների մշակմամբ զբաղվող լիցենզավորված ընկերություններին: Սևան համայնքի աղբահանող կազմակերպության հետ կնքվելու է պայմանագիր՝ կենցաղային և շինարարական աղբի հավաքման և քաղաքային աղբավայրում տեղադրման համար:

Աշխատանքների իրականացման ընթացքում օդային գծի ուրվագծով ծառահատումներ իրականացնելու անհրաժեշտություն չի առաջանա, քանի որ օդային գծի անցկացման համար օգտագործվելու են ինքնակիր մեկուսացված հաղորդալարեր (ԻՄՀ), որոնք մեկուսիչ թաղանթով և բարձր անվտանգությամբ օժտված հաղորդալարեր են և հիմնականում օգտագործվում են բնակելի և անտառապատ գոտիներում օդային գծերի անցկացման համար:

Օդային գծի ուրվագծի հարևանությամբ առկա ծառաթփուտային բուսականության պաշտպանության և հնարավոր վնասակար ազդեցությունների նվազեցմանը և կանխմանն ուղղված նախատեսվում են հետևյալ միջոցառումները:

- Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ հենասյուների տեղադրման վայրերում շրջայցի կազմակերպում՝ բուսատեսակների բացահայտման նպատակով:
- Հատուկ գործողությունների պլանի մշակում՝ պահպանության ենթակա կենսաբազմազանության տեսակների համար:
- Տարածքի հարևանությամբ ծառերի գույքագրում, ցանկապատում, փորման ընթացքում արմատների պաշտպանում:



Շինարարության ժամակնակահատվածում առաջացող աղմուկի ազդեցությունը նվազեցնելու նպատակով ևս նախատեսվել են միջոցառումներ, այդ թվում՝ շինարարական աշխատանքների դադարեցում գիշերային ժամերին, շինարարական տեխնիկայի կանոնավոր ստուգում և տեխնիկական սպասարկում, աղմուկի մակարդակի ապահովում նորմայի սահմաններում:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ, որոնք միտված են օդային գծի տեսողական ազդեցության մեղմացմանը, ինչպես օրինակ հենասյուների ներկումը կանաչ գույնով՝ շրջակա լանդշաֆտի հետ ներդաշնակության ապահովման համար:

Սոցիալական ազդեցության տեսանկյունից նախատեսվող գործունեությունը դրական է, քանի որ հետագայում հնարավորություն է ստեղծվելու ևս 6 բաժանորդի էլեկտրամատակարարման ապահովումը: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր սոցիալական կարճաժամկետ ազդեցությունների (երթևեկության սահմանափակում, անվտանգություն և այլ սոցիալական ազդեցություններ) նվազեցման համար նախատեսվել են մեղմացնող միջոցառումներ, ինչպես օրինակ՝ աշխատանքների իրականացում ոչ հանգստյան ժամանակահատվածում, օդային գծի կառուցման հատվածում համապատասխան ճանապարհային նշաններով կահավորում և այլն:

Հայտում նախատեսվել են նաև միջոցառումներ, որոնք ուղղված են՝ աշխատանքի անվտանգությանը, արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելուն և արդյունավետ հակազդելուն:

Գործունեության իրականացման ընթացքում տարաբնույթ մեղմացնող/նվազեցնող միջոցառումները ամփոփվել են բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկման ծրագրերում, որոնք պետք է իրականացվեն կապալառու կազմակերպության կողմից: Բնապահպանական միջոցառումների իրականացման համար ՇՄԱԳ-ում նախատեսվել են ծախսեր:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում իրականացվել են հանրային իրազեկումներ և քննարկումներ: Փորձաքննության գործընթացում ՇՄԱԳ-ի վերաբերյալ ստացված կարծիքներով հաշվետվությունը լրամշակվել է:

Ամփոփելով վերը շարադրվածը, պետք է նշել, որ գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են ժամանակավոր և տեղայնացված բնույթի՝ պայմանավորված շինարարության կարճատև ժամանակահատվածով: Նախագծի իրականացումը հնարավորություն կտա ապահովել էլեկտրամատակարարում ոչ միայն Արտաշ Գրիգորյանին պատկանող տարածքի համար, այլ նաև հնարավորություն կստեղծվի ապահովել էլեկտրամատակարարում ևս 6 բաժանորդների համար, քանի որ ՕԳՄ-ից միացվող հնարավոր բոլոր հաշվարկվել է 7 սպառիչների համար:



Փորձաքննական պահանջներ

1. Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել 2006թ-ի նոյեմբերի 27-ի «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ Օրենքի և ՀՀ կառավարության՝ 29.01.2010թ. «ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն և N72-Ն և 31.07.2014թ. N781-Ն որոշումների պահանջներով:

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել բուսաբանի և կենդանաբանի մասնակցությամբ՝ հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող բուսական և կենդանական տեսակների պահպանությունը և միջոցառումների արդյունավետությունն ապահովելու նպատակով:

3. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է Սևան համայնքի ղեկավարից ստանալ համապատասխան համաձայնեցումներ՝ շինարարական հրապարակի տեղադրման, բուսաշերտի ժամանակավոր պահեստավորման, շինարարական աղբի և թափոնների հեռացման վայրերի վերաբերյալ:

4. Շինարարության ընթացքում անհրաժեշտ է ապահովել բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկման ծրագրերում առաջարկվող միջոցառումների և մշտադիտարկումների իրականացումն ու ժամանակացույցերը:

5. Գործունեության մեկնարկն անհրաժեշտ է համաձայնեցնել «Սևան» ԱՊ ՊՈԱԿ-ի հետ:

6. Օդային գծից սնվող այլ բաժանորդների էլեկտրամատակարարման և լրացուցիչ մալուխների անցկացման համապատասխան փաստաթղթերը, մինչև գործունեության կատարումն, անհրաժեշտ է ներկայացնել բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայր վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի, Սևան քաղաքի, թերակղզու ոչ ափամերձ հատվածում Արտաշ Գրիգորյանին պատկանող տարածքի 0.22ԿՎ էլեկտրամատակարարման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Ա. Դոնոյան

Գլխ. մասնագետ

Հ. Մկրտչյան

